ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Գագիկ Հարությունյան

Հայտնի է, որ տեղեկատվական-հոգևոր անվտանգության խնդիրներն անմիջականորեն կապված են մշակութային և քաղաքակրթական բնույթի հարցերի համախմբի հետ: Իր հերթին, քաղաքակրթական գործոնի նշանակությունը, հաշվի առնելով քաղաքակրթական բախումների վերաբերյալ Սեմյուել Հանթինգտոնի հայեցակարգի քաղաքական-գործնական մարմնավորում ստացած ԱՄՆ-Իսլամական աշխարհ հակամարտությունը, վերջին տասնամյակում էապես աճել է: Կարելի է փաստել, որ ներկա իրադրությունում այս կամ այն ազգի ինքնության պահպանման խնդիրը զգալիորեն տեղափոխվել է քաղաքակրթական պատկանելության ոլորտ: Ելնելով պատմաքաղաքական նախադրյալներից և այսօրվա իրողություններից՝ հայկական քաղաքակրթությունը դիտարկվում է որպես ուրույն երևույթ: Քաղաքակրթական ուրույնությունը Հայաստանի և հայության պարագայում ենթադրում է ազգային «փակ» պաշտպանական և գլոբալ «բաց» հաղորդակցման մոտեցումների համատեղում: Նման հայեցակարգը թույլ է տալիս համակարգված և տրամաբանական մոտեցումներ կիրառել տեղեկատվական-հոգևոր անվտանգության հետ առնչվող խնդիրների հանդեպ:

Աշխարհի ներկա ռազմաքաղաքական պատկերը բնութագրող քաղաքակրթական բախումներում տեղեկատվական և դրա բաղկացուցիչ մասը կազմող հոգևոր անվտանգության խնդիրները խիստ հրատապ են դարձել, և հոգևոր արժեքների պահպանումը վերածվել է ազգային անվտանգության կարևորագույն խնդրի: Պատահական չէ, որ ամերիկյան քաղաքագետների կարծիքով՝ ազգային անվտանգության համակարգի գործունեության հիմնական նպատակը ամերիկյան քաղաքակրթական արժեքային համակարգի պահպանումն ու սփռումն է: Կարելի է պնդել, որ տեղեկատվական և քաղաքակրթական գործոնի անտեսումը թերի է դարձնում ցանկացած քաղաքական ռազմավարություն:

Ինֆոգեն սպառնալիքներ

Վերոհիշյալի համատեքստում ազգային և քաղաքակրթական անվտանգության գործառույթներն էապես կապված են ինֆոգեն (տեղեկատվածին) գործընթացների և մարտահրավերների հետ, որոնք պարունակում են դրական-կոնստրուկտիվ՝ զարգացում ենթադրող և բացասական-դեստրուկտիվ՝ անհատի և հասարակության հոգևոր արժեհամակարգի դեմ ուղղված, բաղադրիչներ: Հարկ է շեշտել, որ այդ երկու տարաբնույթ մարտահրավերներին համարժեք չարձագանքելը հավասարաչափ վտանգավոր է ցանկացած հանրության համար: Քաղաքակրթական խնդիրների համատեքստում նպատակահարմար է լրացուցիչ անգամ ներկայացնել ինֆոգեն սպառնալիքների աղբյուրների վերաբերյալ սահմանումները (տե՛ս, մասնավորապես, [1, 2]):

Ինֆոգեն արտաքին սպառնալիքների աղբյուրներ կարող են հանդիսանալ.

- ՀՀ ռազմավարական-մարտավարական մրցակից կամ հակառակորդ հանդիսացող երկրները կամ կազմակերպությունները,
- իրենց շահերը հետապնդող, սակայն ՀՀ ազգային շահերն անտեսող երկրները և կազմակերպությունները, որոնց թվում կարող են լինել նաև ՀՀ քաղաքական ու տնտեսական գործընկերները,
- տեղեկատվական դաշտում առկա, բայց ոչ հատուկ ՀՀ դեմ ուղղված քաոսային տեղեկատվական հոսքերը, որոնք բացասական ներգործություն են ունենում հանրային գիտակցության վրա:

Ինֆոգեն ներքին սպառնալիքների աղբյուր կարող են հանդիսանալ.

- ՀՀ-ում տեղակայված, սակայն օտարերկրյա ռեսուրսներից սնվող քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները և զանգվածային լրատվամիջոցները, որոնց գործողություններն ուղղված են ՀՀ ազգային շահերի դեմ,
- ներքին մասնավոր և պետական ռեսուրսների վրա հիմնված քաղաքական, հասարակական կազմակերպությունները, ձեռնարկատիրական ընկերությունները, պետական մարմինները և ԶԼՄ-ը, որոնց պատկերացումները ՀՀ ազգային շահերի վերաբերյալ հստակեցված չեն: Որպես հետևանք՝ նման կառույցները կարող են ակամա կամ գաղափարական սխալ կողմնորոշման հետևանքով ինֆոգեն վտանգի աղբյուր հանդիսանալ ՀՀ հանրության համար (նման գործողությունները երբեմն որակվում են որպես «տեղեկատվական պատերազմ սեփական ժողովրդի դեմ»):

Ինչպես հետևում է վերոհիշյալ ձևակերպումներից, ինֆոգեն սպառնալիքների բացահայտումը և որակումը զգալի չափով պայմանավորված են ազգային շահի բովանդակային պատկերացումներով: Այսինքն՝ կարելի է փաստել, որ *ազգային անվտանգության* հայեցակարգի ցանկացած մշակում ենթադրում է *ազգային շահ* հասկացության վերաբերյալ զարգացած պատկերացումներ և հստակեցված ձևակերպումներ: Հակառակ պարագայում ինֆոգեն ցանկացած բնույթի սպառնալիքների բացահայտումը խիստ վիճահարույց է լինելու: Դրական ինֆոգեն գործընթացները պայմանավորված են գլոբալ տեղեկատվական-գիտելիքային դաշտի ձևավորմամբ:

Հայտնի է, որ արդի տեղեկատվական դաշտն արտացոլում է առաջատար տերությունների հիերարխիան գլոբալ քաղաքական դաշտում: Միևնույն ժամանակ այդ դաշտում սակավ ռազմաքաղաքական, տնտեսական հնարավորություններ ունեցող սուբյեկտները, ձեռք բերելով անհրաժեշտ ինտելեկտուալ ռեսուրսներ և ասիմետրիկ (անհամաչափ) գործելու կարողություններ, կարող են հասնել զգալի արդյունքների: Նկատենք, որ հաճախ այդ սուբյեկտները կարող են և չլինել պետություններ կամ նվազագույնը ուղղակիորեն չենթարկվել պետությանը: Նշված իրողությունները պետք է ընկալվեն և՛ որպես մարտահրավեր հայությանը և հայոց ինքնությանը, և՛ որպես այդ ինքնության զարգացման լրացուցիչ հնարավորություն:

Մարտահրավերի էությունն այն է, որ արդի գլոբալացումը պարունակում է գաղափարախոսական, հոգևոր-մշակութային էքսպանսիայի տարրեր: Այդ երևույթը, որպես կանոն, արտացոլում է ներգործող երկրի ազգային շահերը և այդպիսով կարող է խաթարել կրավորաբար ենթարկվողի ազգային քաղաքակրթական և տեղեկատվական-հոգևոր անվտանգությունը: Միևնույն ժամանակ, ընդհանուր տեղեկատվական-գիտելիքային դաշտի ձևավորումը, տարբեր քաղաքակրթությունների մշակութային փոխազդեցությունները ստեղծում են նպաստավոր պայմաններ սեփական հոգևոր-մշակութային բովանդակության զարգացման և նպատակային սփռման համար: Թվարկված գործառույթները ժամանակակից տեղեկատվական գործողությունների մասն են կազմում:

Նոր սերնդի տեղեկատվական պատերազմները

Ժամանակակից տեղեկատվական գործողությունների և պատերազմների բովանդակությունն ու եզրաբանությունը սկսել են ձևավորվել 1991թ. (տե՛ս [1-3]): Իսկ 1998թ. արդեն պատրաստ էր ԱՄՆ պաշտպանության նախարարության «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինը»: Այդ փաստաթղթում, որի հիմքում դրված են *ՌԵՆԴ* «ուղեղային կենտրոնի» մշակումները, ներկայացված է, մասնավորապես, «տեղեկատվական պա-

տերազմ» հասկացության հետևյալ սահմանումը. *տեղեկատվական պատերազմը համալիր ներգործություն է հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ զինված հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահարել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը:*

Սահմանումից հետևում է, որ տեղեկատվական պատերազմը տեխնիկական և հոգևոր-գաղափարական բնույթի ինֆոգեն սպառնալիքների գործնական իրագործումն է: Մշակումներն այս ոլորտում շարունակվում են, և ներկայումս գործնական հարթություն է տեղափոխվել երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի պատերազմը դիտվում էր որպես պատերազմի ավանդական միջոցների կարևոր բաղադրամաս (միջուկայինի, կենսաբանականի և այլնի շարքում), ապա երկրորդ սերնդինը կարող է հանդես գալ լիովին ինքնուրույն կերպով: Ի թիվս այն խնդիրների, որոնք ենթադրվում է լուծել այդ տիպի տեղեկատվական պատերազմների միջոցով, առանձնացնենք հետևյալները.

- *բարոյազուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,*
- *քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա, սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում:*

Ինչպես տեսնում ենք, երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներում ավելի քան կարևորվում են հոգևոր-գաղափարական բնույթի գործոնները[1]: Դժվար չէ տեսնել, որ վերոհիշյալ դրույթները արտացոլում են գտել անցյալի և ներկայիս (այսպես կոչված «գունավոր») հեղափոխությունների հետ կապված իրողություններում: Կարելի է պնդել, որ վերջին տիպի հեղափոխությունները երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների դասական նմուշներ են, երբ առանց ավանդական պատերազմներին բնորոշ ռազմական գործողությունների դիմելու՝ ներազդող կողմը լուծում է իր առջև դրված աշխարհաքաղաքական-աշխարհագաղափարախոսական խնդիրները [5]:

Հարկ է շեշտել, որ տեղեկատվական մեծածավալ հոսքերի պայմաններում ներքին դաշտում հայտնվող մի շարք ինֆոգեն վտանգներից, օրինակ՝

[1] Ներկայումս մշակվում են նաև սինթետիկ՝ տեղեկատվական-կենսաբանական պատերազմների հայեցակարգերը (տե՛ս, օրինակ, [4]): Սակայն այս հոդվածում կդիտարկվեն հիմնականում երկրորդ սերնդի պատերազմների հետ կապված խնդիրներ:

«հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծումից», գրեթե անհնար է պաշտպանվել արգելող (կամ միայն արգելող) գործողությունների միջոցով: Այս խնդրի լուծման համար արդյունավետ կարող են լինել միայն տվյալ երկրի քաղաքակրթական-մշակութային ժառանգությունը և տեղեկատվական անվտանգության համատեքստում դրանց վերաբերյալ ունեցած զարգացած պատկերացումները:

Քաղաքակրթություն և քաղաքականություն

Քաղաքակրթական գործոնը անցյալում ևս հաճախ առաջնային դեր է ունեցել, սակայն որպես քաղաքական կատեգորիա այն սկսեց օգտագործվել 1993-ից, երբ «Արտաքին քաղաքականություն» ամսագրում հրապարակվեց Սեմյուել Հանթինգտոնի «Քաղաքակրթությունների բախում» հոդվածը (հետագայում այն վերամշակվեց և հրապարակվեց որպես մենագրություն [6]): Համաձայն հեղինակի՝ արդի գլոբալ քաղաքականության զարգացումների հիմնական և ամենավտանգավոր ուղղությունը լինելու է միմյանցից տարբերվող քաղաքակրթական խմբերի ընդհարումը:

Հայտնի է, որ «քաղաքակրթություն» հասկացությունը բնութագրվում է որպես ազգին կամ ազգերի խմբին բնորոշ որոշակի (ծագումնաբանական, լեզվական, կրոնական, մշակութային և այլն) հատկանիշների ընդհանրություն (տե՛ս, օրինակ, [7, 8]): Միևնույն ժամանակ, տարբեր հեղինակների աշխատություններում տարբերվում է և՛ քաղաքակրթությունը բնութագրող հատկանիշների ցանկը, և՛ այդ հատկանիշների մեկնաբանությունը: Մեթոդաբանական նման տարակարծության հետևանքով մի շարք հեղինակների մոտ «մեռյալ» և գոյություն ունեցող քաղաքակրթությունների կազմը և թիվը տարբերվում են միմյանցից: Համաձայն Հանթինգտոնի (որն իր աշխատությունում, նկատենք, խուսափում է տալ «քաղաքակրթություն» հասկացության հստակ սահմանումը)՝ արդի աշխարհում կա ընդամենը 9 քաղաքակրթություն. Արևմտյան, Լատինաամերիկյան, Աֆրիկյան, Իսլամական, Չինական, Հինդուիստական, Ուղղափառ, Բուդդիստական և Ճապոնական:

Նման սահմանումը բազմաթիվ հարցերի տեղիք է տալիս: Մասնավորապես, ըստ որոշ հետազոտողների՝ ԱՄՆ-ը և Եվրոպան չի կարելի նույնացնել և ներկայացնել որպես միասնական Արևմտյան քաղաքակրթություն (ինչպես դա դիտարկում է Հանթինգտոնը), քանի որ դրանք այսօր տարբեր քաղաքակրթական մոդելներ են և դրանց միջև հակասությունները խորանալու միտում ունեն: Կարծում ենք, որ այս, ինչպես նաև այլ խնդիրներում Հանթինգտոնի ձևակերպումներն արտահայտում են նրա քաղաքական՝ ամերիկակենտրոն նախասիրությունները, քան հայտնի ակադեմիական մոտեցումները: Այսպիսով, Հանթինգտոնի քաղաքակրթությունների

ցուցակը ներկայացնում է ամերիկյան ընտրանու հայեցակարգային պատկերացումները և ենթարկվում է հստակ տրամաբանության. նշված քաղաքակրթական միավորներն ունեն աշխարհաքաղաքական զգալի ներուժ և արդի միջազգային հարաբերությունների հիմնական դերակատարներն են: Այսպիսով, «Քաղաքակրթությունների բախում» աշխատության ի հայտ գալով «քաղաքակրթություն» հասկացությունը, որը նախկինում առավելապես պատմաբանների, փիլիսոփաների և մշակութաբանների ուսումնասիրության առարկա էր, զգալի չափով տեղափոխվեց նաև ռեալ քաղաքականության ոլորտ, որտեղ այնքան էլ էական չեն հիմնարար գիտությանը բնորոշ փաստագրական և մեթոդաբանական նրբությունները:

Հանթինգտոնի հայեցակարգային բնույթի թեզը դրվել է ԱՄՆ գլոբալ ռազմավարության հիմքում[1] և գաղափարական հարթությունում հիմնավորում է «հակաահաբեկչական պատերազմի» կարգախոսով ընթացող ԱՄՆ (որը, համաձայն մեր պատկերացումների, ներկայացնում է ոչ թե «արևմտյան», այլ «անգլոսաքսոնյան» քաղաքակրթությունը) և Իսլամական աշխարհի հակամարտությունը:

Իր հերթին հայտնի է, որ ԱՄՆ-ի կողմից կիրառվող դոկտրինալ դրույթները զգալիորեն ազդում են ընթացիկ քաղաքականության վրա. դրանք վերածվում են յուրատեսակ «կանոնագրքի», որը թելադրում է «խաղի կանոնները» միջազգային հարաբերություններում: Ենթարկվելով այդ տրամաբանությանը՝ քաղաքակրթական գործոնի նշանակությունը լրացուցիչ բարձրացել է. այդ ոլորտում հակասությունները և ընդհանրությունները դարձել են կարևոր, իսկ երբեմն էլ՝ որոշիչ հանգամանք գաղափարախոսական, քաղաքական և անգամ տնտեսական հարաբերություններում[2]: Այսօր ամենատարբեր երկրների ղեկավարների ելույթներում սովորական է դարձել «քաղաքակրթություն» եզրի հոլովումը:

Այսպիսով, կարելի է ամրագրել, որ այդ գործոնի թերագնահատումը և, առավել ևս, անտեսումը կարող են ծանր հետևանքներ ունենալ ցանկացած ազգության կամ պետական միավորի համար: Միևնույն ժամանակ,

[1] Ամերիկյան ժամանակակից քաղաքականության դոկտրինների զգալի մասը՝ գերկանխարգելիչ հարվածների հայեցակարգը, տեղեկատվական-հոգեբանական պատերազմները, Լյուիսի դոկտրինը (որը, փաստորեն, ներկայացնում է հայտնի «բաժանիր, որ տիրես» դրույթը), դասական ռազմավարությունում հայտնի թեզեր են, որոնք համակարգվել, արդիական եզրաբանություն և գիտական հիմնավորում են ստացել ամերիկյան «ուղեղային կենտրոնների» կողմից:

[2] Բնորոշ է, որ Իրանի նախկին նախագահ Խաթամին, որպես հակակշիռ «քաղաքակրթությունների բախման» դոկտրինի, առաջ քաշեց կառուցողական «քաղաքակրթությունների երկխոսության» հայեցակարգը: Սակայն պետք է ընդունել, որ այս կամ այն քաղաքական մեթոդաբանության ներդրումը գլոբալ քաղաքականություն գլխավորապես կախված է ներդրողի ունեցած ընդհանրական ռեսուրսներից: Այդ համատեքստում իրանական մոտեցումը, ի տարբերություն ամերիկյանի, այսօր տարածում չի գտնում և շոշափվում է հիմնականում գիտական-վերլուծաբանական շրջանակներում, երբեմն էլ՝ բավական նեղ և որոշակի սահմաններ ունեցող տեղեկատվական դաշտում:

միշտ չէ, որ այս կամ այն ազգը կարող է միանշանակ պատասխանել, թե որ քաղաքակրթությանն է պատկանում և ըստ այդմ ձևավորել իր արտաքին ու ներքին տեղեկատվական ռազմավարությունը: Նրանց մի մասը ոչ միայն չունի հստակ պատկերացումներ իր քաղաքակրթական պատկանելության վերաբերյալ, այլև մասնատված է ըստ իր քաղաքակրթական կողմնորոշումների, ինչը երբեմն աշխարհաքաղաքական որոշակի նպատակներով իրագործված արտաքին ազդեցությունների հետևանք է: Այդպիսի իրավիճակում հայտնված ազգերը կամ դրանց պետական միավորումները Հանթինգտոնը որակում է որպես «պառակտված» և թերևս իրավացիորեն կանխատեսում է դրանց փլուզումը: Ինչպես հայտնի է, նման սցենար ոչ վաղ անցյալում իրագործվեց Հարավսլավիայում. երբեմնի զարգացած այդ երկիրն այժմ անվանում են «նախկին»: Նույն տրամաբանությանն է ենթարկվում այսօրվա Ուկրաինան, որտեղ տեղի է ունենում ազգաբնակչության տարանջատում ըստ ռուսական և այդ երկրի պարագայում փոքր-ինչ անորոշ արտահայտված եվրոպական կողմնորոշումների հատկանիշով: Հատկանշական է, որ համաձայն Հանթինգտոնի կանխատեսումների, նման իրավիճակում կարող է հայտնվել նաև ԱՄՆ-ը [9]:

Հարկ է նշել, որ քաղաքակրթական կողմնորոշումների հարցում ներկայումս փոքր-ինչ շփոթ է տիրում նաև Հայաստանում. ընտրանու շրջանակներում երբեմն հնչում են իրարամերժ մտքեր Հայաստանի և հայության քաղաքական/քաղաքակրթական կողմնորոշումների վերաբերյալ: Այդ երևույթը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- ՀՀ աշխարհագրական դիրքը և օբյեկտիվորեն ձևավորված քաղաքական իրավիճակը թելադրում են, որպեսզի երկրի քաղաքական ղեկավարությունը վարի ճկուն, կոմպլեմենտար քաղաքականություն՝ խուսանավելով խոշոր աշխարհաքաղաքական դերակատարների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի և այդ միության առանձին տերությունների, Իրանի և (արդեն կամ շուտով) Չինաստանի ազդեցությունների դաշտում: Որպես նման իրադրության անուղղակի հետևանք՝ հանրապետությունում ձևավորվել են քաղաքական, տնտեսական և փորձագիտական հանրությանը պատկանող խմբեր, որոնք հանդիսանում են այս կամ այն աշխարհաքաղաքական ուղղության կողմնակիցներ: Իրենց հերթին, այդ խմբերի անդամների աշխարհաքաղաքական նախապատվությունները՝ անհրաժեշտ տեղեկատվական համակարգի բացակայության պատճառով, վերաճում են քաղաքակրթականի: Նման միտումը հետևանք է և՛ վերոհիշյալ խմբերի անդամների անհատական քաղաքական/քաղաքակրթական կողմնորոշումների, և՛ այդ խմբերի անդամների հետ տարվող այն աշխատանքի, որը վարում են տարբեր

աշխարհաքաղաքական դերակատարների ներկայացուցիչները:

- Սփյուռքի քաղաքական և հասարակական կառույցների ներկայացուցիչները նույնպես հաճախ ներկայացնում են հանրությանը իրենց քաղաքակրթական նախասիրությունները: Դրանք, որպես կանոն, նույնացվում են նրանց բնակության վայրերի՝ գլխավորապես Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրոպայի ու Մերձավոր և Միջին Արևելքի հետ: Այս գործընթացում, պետք է ենթադրել, նույնպես դեր ունեն և՛ աշխարհայացքային, և՛ քաղաքական ազդեցության հետևանքով ձևավորվող մոտեցումները:

Վերոհիշյալ գործոններն արտաքին և ներքին ինֆոգեն սպառնալիքների դասական արտահայտությունն են: Այս ոլորտում տեղեկատվական անվտանգությունը խաթարող սպառնալիքների աղբյուր են հանդիսանում, ինչպես ձևակերպված է այս հոդվածի առաջին ենթաբաժնում՝ «իրենց շահերը հետապնդող, սակայն ՀՀ ազգային շահերն անտեսող երկրները և կազմակերպությունները, որոնց թվում կարող են լինել նաև ՀՀ քաղաքական ու տնտեսական գործընկերները» և «ներքին ռեսուրսների վրա հիմնված քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները, ընկերությունները, պետական մարմինները և ԶԼՄ-ը, որոնց պատկերացումները ՀՀ ազգային շահերի վերաբերյալ հստակեցված չեն»: «Պառակտված քաղաքակրթությունների» վերաբերյալ Հանթինգտոնի կանխատեսումների համատեքստում վերոհիշյալ աշխարհաքաղաքական-քաղաքակրթական տարակարծությունները պետք է ընդունել որպես մարտահրավեր՝ ուղղված Հայաստանին և հայությանն ընդհանրապես: Այս ամենը թելադրում է մշակել մոտեցումներ, որոնք թույլ կտան խուսափել անցանկալի զարգացումներից և «պառակտման» սցենարներից:

Հայաստանը և հայությունը՝ ուրույն քաղաքակրթություն

Հաշվի առնելով գլոբալացման գործընթացների տրամաբանությունը՝ դժվար չէ նկատել, որ քաղաքակրթական բնույթի հիմնախնդիրների առջև այսօր կանգնած է ոչ միայն Հայաստանը, այլև մի շարք այլ երկրներ (նախկին ԽՍՀՄ-ից, օրինակ՝ Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը և Մոլդովան), որոնք քաղաքակրթական կողմնորոշումների հարթությունում հայտնվել են երկընտրանքի (լավագույն պարագայում) առջև: Նման իրավիճակում քաղաքական ինքնիշխանությունը և էթնիկ ինքնությունը չկորցնելու համար պահանջվում են պատմամշակութային, քաղաքակրթական որակի ազգային ռեսուրսներ: Մինչդեռ բոլորը չեն, որ տիրապետում են նման ռեսուրսների:

Վերոհիշյալի համատեքստում հայության դիրքերն անհամեմատ շահեկան են: Կան բոլոր նախադրյալները պնդելու, որ Հայաստան և հայություն միասնությունը ուրույն, թերևս տեղին է օգտվել Առնոլդ Թոյնբիի եզրաբանությունից՝ լոկա՛լ քաղաքակրթություն է հանդիսանում: Հայկական քաղաքակրթությանը բնորոշ են ուրույն հոգևոր-մշակութային արժեքներ: Թվարկենք ընթերցողին հայտնի այդ հատկանիշներից մի քանիսը.

- Հայերի ծագումնաբանությունը և հայոց լեզուն ուրույն տեղ են գրավում հնդեվրոպական ազգերի խմբում:
- Առաջինը քրիստոնեություն ընդունած պետության խորհրդի համատեքստում Հայ Առաքելական եկեղեցին ունի իր ուրույն ուղղվածությունը և տեղը քրիստոնեական աշխարհում:
- Ինքնատիպ երևույթ են Մեսրոպյան գիրը և դրանով պայմանավորված հայկական բազմադարյա գրական ժառանգությունը:
- Հայկական մշակույթը (ճարտարապետություն, երաժշտություն, պարարվեստ) ունի ուրույնությունը հաստատող բոլոր հատկանիշները: Ինչպես հայտնի է, հայկական մշակույթը «արտահանվել» է ամենատարբեր երկրներ[1]:

Հավելենք, որ հայությունը յուրովի է անցել իր պատմական ուղին, ձեռք բերել հարուստ քաղաքական մշակույթ, ավանդույթներ և այսօր էլ հանդիսանում է ոչ միայն տարածաշրջանային, այլև գլոբալ քաղաքականության (հաշվի առնելով, մասնավորապես, Ցեղասպանության և ԼՂՀ հիմնախնդրին առնչվող հարցերը) սուբյեկտ:

Անհրաժեշտ է շեշտել, որ հայկական ուրույնությունը սոսկ պատմություն չէ, դա նաև այսօրվա իրողություն է և արմատացած է ժողովրդի գիտակցությունում: Վերջինի մասին են վկայում, մասնավորապես, «Գործընկերություն հանուն բաց հասարակության» ՀԿ՝ «Հայաստանի երիտասարդության վերաբերմունքը եվրոպական արժեքներին և Հայաստանի ինտեգրմանը Եվրոպային» թեմայով անցկացրած սոցհարցման արդյունքները[2], որոնք ներկայացված են *Աղյուսակ 1-ում:*

[1] Այս ամենի առիթով հարկ է նշել, որ ներկայումս հայագիտության խնդիրները դուրս են գալիս նախորդ դարաշրջաններին բնորոշ գիտական չափորոշիչների սահմաններից և վերիմաստավորվում որպես Հայաստանի ազգային շահերի ու տեղեկատվական անվտանգության (մասնավորապես՝ վերջինիս հոգևոր-քաղաքակրթական-մշակութային հատվածի) կարևոր բաղադրամաս: Այլ խոսքերով՝ քաղաքակրթական մրցակցության պայմաններում հայագիտության զարգացման խնդիրը վերածվել է ազգային անվտանգության ապահովման նախապայմանի: Ստեղծված իրավիճակը, թերևս, պահանջում է հայագիտության գործառույթների պայմանական տարանջատում երկու՝ հիմնարար և կիրառական հարթությունների: Կիրառական հայագիտության նպատակն է հայագիտական հետազոտություններից ստացված արդյունքներն առավելագույնս արդյունավետ օգտագործել տեղեկատվական, գաղափարախոսական և քաղաքական հարթություններում և այդպիսով դրանք ի սպաս դնել ազգային անվտանգության խնդիրներին: Այլ խոսքերով՝ կիրառական հայագիտությունը ենթադրում է գաղափարախոսական-քաղաքակրթական ոլորտում իրականացնել համակարգված գործողություններ, որոնք, համապատասխան լինելով արդի քաղաքակրթական բախումների տրամաբանությանը, կապահովեն Հայաստանի և հայության անվտանգությունը և մրցունակությունը:

[2] Տե ս http://partnership.am/files/unlisted/European%20values_data_rus.xls

Աղյուսակ 1

Ձեր կարծիքով, ո՞ր մշակույթին և մտածելակերպին են մոտ հայկական մշակույթը և մտածելակերպը

	Մշակույթ	%
1.	Ռուսական	4,3
2.	Մերձավորարևելյան	7,4
3.	Եվրոպական	6,9
4.	Ամերիկյան	1,6
5.	Ոչ մեկին, հայկական մշակույթը և մենթալիտետը եզակի են	70,5
6.	Դժվարանում եմ պատասխանել	9,3
7.	Ընդամենը	100

Ինչպես տեսնում ենք, հարցվողների 70,5%-ն առաջարկված հարցին պատասխանել է «Ոչ մեկին, հայկական մշակույթը և մենթալիտետը եզակի են»:

Քաղաքական-քաղաքագիտական ընտրանու շրջանակներում քաղաքակրթական կողմնորոշումների թեմայի շուրջ ֆոկուսային հարցում է կատարվել նաև «Նորավանք» հիմնադրամի կողմից: Արդյունքները վկայում են, որ հարցվողների գերակշիռ մասը (մոտ 70%) նույնպես համոզված է, որ Հայաստանը և հայությունը ուրույն քաղաքակրթության կրողներ են: Ստորև ներկայացնենք մի քանի բնորոշ պատասխաններ այդ հարցումից.

- «Հայաստանը լոկալ քաղաքակրթության կրող է… մեր ժողովրդին հատուկ է բաց, ընկալունակ լինելը, տեղայնացնելու կարողությունը, սա մեր ազգի գլխավոր առավելությունն է», «հայերի պատմական առաքելությունը քաղաքակրթությունների կամրջողի դերակատարությունն է»:
- «Ավելի կայուն պատվար՝ ընդդեմ գլոբալացման կամ ծայրահեղ մահմեդականության հաղթարշավների, քան այս է, թերևս, անիմաստ է փնտրել»:
- «Կենտրոնանալ արևմտյան արժեքներից՝ քաղաքական և տնտեսական մրցակցության վրա՝ միջանձնային հարաբերություններում մնալով պահպանողական. այս է պահանջվում: Եվ կարծում եմ՝ սա հնարավոր է»:
- «Հայությունը ... ունի շատ ուրույն լեզու, մշակույթ, գիր, քրիստոնեական մյուս ազգերից տարբերվող եկեղեցի... Հայաստանը, հայությունը ուրույն քաղաքակրթական միավոր են»:

Այսպիսով, հանրապետությունում կարևոր դերակատարում ունեցող սոցիալական խմբերի՝ երիտասարդության և քաղաքական ընտրանու գե-

բակշռող մասը հայությունն ընկալում է որպես ուրույն քաղաքակրթություն: Այդ իրողությունը լուրջ նախապայման է, որպեսզի այդ թեզը տեղափոխվի տեղեկատվական և քաղաքական դաշտ: Սակայն ուրույնության վերաբերյալ խնդիրները և դրույթները չպետք է հասցնել, այսպես կոչված, «քաղաքակրթական պատի[1]» գաղափարի ձևավորմանը, ինչը կարող է խաթարել ազգի զարգացումը և որը, ըստ ամենայնի, բնորոշ չէ հայությանը:

Հայկական քաղաքակրթությունը որպես «բաց» համակարգ

Ակնհայտ է, որ համաշխարհային մրցակցային դաշտում արժանավայել հանդես գալու համար քաղաքակրթական ուրույնությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Քաղաքակրթական արժեքների կրողը պետք է ոչ միայն կարողանա պահպանել իր հոգևոր-մշակութային արժեքները, այլև ունակ լինի դրանք սփռելու և փոխազդվելու, օգտվելու հոգևոր, մտավոր ու տնտեսական զարգացման համար ընձեռված հնարավորություններից, համապատասխան լինելու համաշխարհային զարգացումների միտումներին: Այլ խոսքերով՝ քաղաքակրթական համակարգը մրցունակ լինելու համար պետք է լինի ընկալունակ և «բաց»:

Աղյուսակ 2

Պնդումներից որի՞ հետ եք դուք համաձայն

	Պնդում	%
1.	Եվրոպական մշակույթը շատ զարգացած է և առաջադեմ, և մենք պետք է ձգտենք ընդօրինակել և յուրացնել դրա արժեքներն ու ստանդարտները	10.1
2.	Եվրոպական արժեքներն ու ստանդարտները հիմնականում հակասում են հայկական ազգային արժեքներին և ավանդույթներին, այդ իսկ պատճառով չպետք է ընդօրինակել դրանք	23.4
3.	Իմաստ չեմ տեսնում հակադրել հայկական և եվրոպական մշակույթները՝ մենք հեշտությամբ կարող ենք ինտեգրվել Եվրոպային՝ պահպանելով և՛ մեր ավանդույթները, և՛ մշակութային արժեքները	59.4
4.	Դժվարանում եմ պատասխանել	7.1
5.	Ընդամենը	100

[1] «Պատ» հասկացությունը երբեմն ընկալվում է ոչ միայն որպես «ֆիզիկական» սահման, այլև ստանում է գաղափարական և խորհրդանշական իմաստ: Օրինակ, մինչև 10մ բարձրություն, 3մ հաստություն, 3000-4000կմ երկարություն ունեցող Մեծ Չինական պատի կառուցումն սկսվել է մ.թ.ա. 246թ. և ավարտվել 1620թ., այսինքն կառուցումը տևել է մոտ 19 դար: Մեր դարաշրջանում «պատի» ամենամեծ նախագիծը ԽՍՀՄ և սոցիալիստական համակարգի սահմանն էր. այն ձգվում էր տասնյակ հազարավոր կիլոմետրեր: Ներկայումս Իսրայելի իշխանությունները 700կմ երկարությամբ «պատ» են կառուցում հրեա և պաղեստինցի ժողովուրդներին տարանջատելու նպատակով: Նման մի ծրագիր է ձևավորվում նաև ԱՄՆ-ում, որտեղ նախատեսվում է ԱՄՆ-Մեքսիկա սահմանի երկայնքով մոտ 1200կմ «պատ» կառուցել և այդպիսով արգելել մեքսիկացիներին անլեգալ ներթափանցել ԱՄՆ: «Պատի» գաղափարը համակել է նաև ադրբեջանական որոշ գործիչների. նրանք առաջարկում են «քաղաքակրթական պատ» կառուցել Ադրբեջանի և Հայաստանի միջև:

Այս համատեքստում հատկանշական է, որ հայկական քաղաքակրթությունը, լինելով ինքնատիպ, միևնույն ժամանակ պարունակում է ունիվերսալ բնույթի բաղադրիչներ, որոնց էությունը համահունչ է համամարդկային արժեքներին: Հայտնի է, որ հայությանը բնորոշ են քրիստոնեական, մարդասիրական մոտեցումներ, որոնք ամրագրված են պատմագրությունում, էպոսում, ռազմական, արհեստակցական և այլ վարքականոններում, իսկ ազատության և ժողովրդավարության գաղափարները հայկական հոգեկերտվածքի մասն են կազմում (դրա մասնավոր արտահայտությունն է ճորտատիրության ինստիտուտի բացակայությունը հայ հասարակությունում): Վերոնշյալ գործոնները իրենցից ներկայացնում են «բաց» համակարգի հատկանիշներ, որոնք մշտապես բնորոշ են եղել հայ հանրությանը[1]: Դրա մասին են վկայում նաև «Գործընկերություն հանուն բաց հասարակության» ՀԿ սոցիոլոգիական հարցումների արդյունքները (տե՛ս *Աղյուսակ 2),* համաձայն որոնց՝ հարցվողների մեծամասնությունը՝ 59.4%, որևէ հակասություն չի տեսնում հայկական և եվրոպական արժեհամակարգերի միջև:

Վերը ներկայացված արդյունքները համահունչ են քաղաքակրթական կողմնորոշումների վերաբերյալ Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հանրության և փորձագետների շրջանակներում իրականացրած հարցախույզից ստացված արդյունքների հետ[2]:

Աղյուսակ 3

	Հանրային հարցում	
1.	Արևմտյան՝ եվրոպական տիպի քաղաքակրթությանը	8.8%
2.	Արևելյան՝ ասիական տիպի քաղաքակրթությանը	12%
3.	Ռուսական քաղաքակրթությանը	17.6%
4.	Միանգամայն տարբերվող և ինքնատիպ քաղաքակրթություն ենք	20.6%
5.	Բոլորի համադրումն (սինթեզն) ենք	22.7%
6.	Դժվարանում եմ պատասխանել	18%
7.	Այլ պատասխան	0.3%

[1] Նկատենք, որ վերոհիշյալ դրույթները որոշ հասարակական կազմակերպություններ փորձում են որպես նորույթ ներմուծել ՀՀ հանրություն: Սակայն տպավորությունն այն է, որ հասարակությունը բավական անտարբեր է այդ քարոզչության նկատմամբ: Դա ակնհայտորեն պայմանավորված է ոչ թե հայտարարագրվող սկզբունքների բովանդակությամբ, այլ այն արհեստական մեթոդներով, որոնց միջոցով իրականացվում են «ժողովրդավարացման» ամենազանազան նախագծերը:

[2] ՀՀ տասներեքամյա անկախությունը և ինքնիշխանությունը, փորձագիտական և հանրային հարցումների արդյունքների ներկայացում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, հոկտեմբեր, 2004:

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներով (հանրային հարցում)՝ հարցվողների 20.6%-ը գտնում է, որ «Միանգամայն տարբերվող և ինքնատիպ քաղաքակրթություն ենք», իսկ 22.7%-ի կարծիքով՝ «Բոլորի համադրումն (սինթեզն) ենք»: Այստեղից հետևում է, որ հարցվողների ամենամեծ խումբը՝ 43.3% (փորձագետների շրջանում այդ արդյունքը կազմում է 54%), գտնում է, որ քաղաքակրթական առումով հայությունն ինքնատիպ է (ուրույն է) կամ «բաց»՝ բոլոր քաղաքակրթությունների համադրումն է: Մինչդեռ այլ քաղաքակրթական կողմնորոշումներ ունեցողների թիվը էապես ավելի քիչ է:

Կարող է թվալ, թե հանրությունում միաժամանակ «բաց» և «փակ» մոտեցումների առկայությունը որոշակի հակասություն կամ երկակիություն է պարունակում: Սակայն այդ իրողությունը քաղաքակրթական ինքնաբավության արտահայտություն է և արտահայտում է հայության կարողությունը՝ պահպանել ուրույնությունը և միաժամանակ հաղորդակից լինել համաշխարհային միտումներին[1]:

Հետևություններ

Ինֆոգեն սպառնալիքները թելադրում են ազգային պետություններին մշակել տեղեկատվական անվտանգության այնպիսի համակարգ, որում քաղաքակրթական և մշակութային բնույթի խնդիրներին առանձնահատուկ տեղ է հատկացվում: Նման մոտեցումը հատկապես հրատապ է այսօր, երբ մշակութաբանական խնդիրները վերաճել են ռազմավարական դոկտրինների, իսկ գլոբալ քաղաքական դաշտում գերակայում են քաղաքակրթական բնույթի բախումները: Հայաստանը և հայությունն ունեն բավարար մշակութային ժառանգություն և կարող են բնութագրվել որպես ուրույն քաղաքակրթություն: Հայկական քաղաքակրթության առանձնահատկություններից է «փակ» պաշտպանական և «բաց» հաղորդակցման մոտեցումների միասնությունը: Միևնույն ժամանակ, ներկայիս դարաշրջանում մրցունակ լինելու նախապայմաններից է այն, որպեսզի ազգային ընտրանին ունենա հստակ, այլ ոչ իրավիճակային, կողմնորոշում դեպի սեփական քաղաքակրթությունը: Այս ամենը ենթադրում է նաև քաղաքակրթական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը կիրառական-քաղաքական հարթությունում:

Մայիս, 2006թ.

[1] Համաձայն մեր դիտարկումների՝ նման գաղափարախոսությունը բնորոշ է արդի աշխարհի ամենամրցունակ քաղաքակրթություններին՝ անգլոսաքսոնյանին (ըստ մեր եզրաբանության) և չինականին:

Աղբյուրներ և գրականություն

1. *Гагик Тер-Арутюнянц,* Инфогенные вызовы, Голос Армении, 08.12.2001, *Гагик Тер-Арутюнянц*, Инфогенные вызовы, в сб. «Информационные войны», серия «Мир сегодня», #4, с.5, Ереван, 2002, *Գագիկ Հարությունյան,* ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003, *Գագիկ Հարությունյան,* Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ, «Տարածաշրջան», «Նորավանք» ԳԿՀ տեղեկագիր, Հատուկ թողարկում, էջ 3, 2005:
2. *Գագիկ Տեր-Հարությունյանց,* Հոգևոր անվտանգությունը որպես տեղեկատվական անվտանգության բաղադրամաս, «Տարածաշրջան», «Նորավանք» ԳԿՀ տեղեկագիր, Հատուկ թողարկում, էջ 29, 2005,*Գագիկ Տերտերյան,* Հոգևոր անվտանգության խնդիրների շուրջ, «Հանրապետական», #6(26), էջ 1, 2005:
3. *Сергей Гриняев,* Поле битвы-киберпространство, Минск, 2004.
4. *Гагик Тер-Арутюнянц,* Войны нового типа, «Византийское наследство», #6, с.16, 2005.
5. *Гагик Арутюнян,* Переходное состояние. Геоидеологический фактор в глобальных развитиях, «21-й Век», #2, с.3, 2005.
6. *Самюэль Хантингтон,* Столкновение цивилизаций, Москва, 2003.
7. *Арнольд Тойнби,* Цивилизация перед судом истории, Москва, 2003.
8. *Питирим Сорокин*, Человек. Цивилизация. Общество, Москва, 1992, *Александр Панарин,* Православная цивилизация в глобальном мире, Москва, 2002.
9. *Самюэль Хантингтон,* Кто мы?, Изд-во Транзиткнига, Москва, 2004.

ЦИВИЛИЗАЦИОННЫЙ ФАКТОР В КОНТЕКСТЕ ПРОБЛЕМ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ

Гагик Арутюнян

Резюме

Актуальность проблем, связанных с информационной безопасностью, существенно возросла с появлением концепций информационных войн, оперирующих терминологией, принятой в историко-культурологической и связанной с нею «цивилизационной» сфере. Формально понятие «цивилизация» переместилось в политическую плоскость после появления теории С. Хантингтона о «столкновении цивилизаций», согласно которой «...центральным и наиболее опасным аспектом зарождающейся глобальной политики станет конфликт между группами различных цивилизаций». Концепция Хантинг-

тона, наряду с другими, была положена в основу стратегии «антитеррористической войны», которая на данном этапе воспринимается как война между Западом и Исламским миром и в которую могут быть вовлечены и другие цивилизационные группы.

Между тем используемые США концепции диктуют те «правила игры», с которыми приходится считаться всем субъектам международной политики. Подчиняясь этой логике, «цивилизационный» фактор вошел в политическую лексику, а вопросы принадлежности государств к той или иной цивилизационной общности приобрели определяющую роль. Однако у целого ряда стран и народов отсутствуют четкие представления о собственной цивили-зационной идентичности. Подобные страны Хантингтон определяет как «разорванные» и предрекает их неминуемый распад. Необходимо признать, что в вопросе о принадлежности к той или иной цивилизационной модели в армянской элите также имеют место противоречивые представления. Обусловлено это тем, что геополитические реалии требуют от политического руководства Армении проведения гибкой внешней политики. Как следствие в элите формируются группы, которые являются сторонниками того или иного геополитического направления. Подобное положение, в свою очередь, формирует в этих влиятельных группах ситуационные представления о необходимости той или иной цивилизационной ориентации. Примерно такая же ситуация сложилась в Диаспоре, представители которой, как правило, идентифицируют свои цивилизационные устремления со страной проживания.

Однако подобные тенденции носят конъюнктурный характер и неадекватны объективным реалиям: Армения и армянство, в отличие от некоторых других сообществ, обладают всеми необходимыми культурными и другими ресурсами цивилизационного характера, которые позволяют воспринимать Армению и армянство как носителей уникальной, самостоятельной цивилизации. Свидетельством тому следующие факты: армяне по своему этногенезу и языку занимают особое место в группе индоевропейских народов; Армянская Апостольская церковь – в контексте создания первого христианского государства – занимает особое положение в христианском мире; армянская письменность и армянская культура в целом также уникальны. Следует подчеркнуть, что уникальность армянской цивилизации не является лишь элементом исторической памяти: согласно результатам опросов в различных социальных группах, у большинства респондентов превалируют представле-

ния об уникальности и самостоятельности армянской цивилизации. Вместе с тем Армянская цивилизация является «открытой» системой. Духовные ценности, присущие нашей цивилизационной модели, во многом универсальны, и она способна эффективно взаимодействовать с другими цивилизациями.

Восприятие армянской элитой Армянской цивилизации как гармонического единства национальной («закрытой») и глобальной, коммуникабельной («открытой») систем позволит избежать противоречий в вопросах цивилизационных ориентаций в Армении и оптимизировать взаимоотношения с Диаспорой. Подобный подход позволит корректно и без внутренних противоречий сконструировать систему информационной безопасности.